

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

History of Ethics

Պատմութիւնը գիտականօրէն սերտելու եւ դասաւորելու համար, հարկ է բաժնել զայն ժամանակաշրջաններու: Պատմական ժամանակաշրջանները եւ անոնց ենթաբաժանումները սակայն, յաճախ կը տարբերին՝ ըստ երկրի ու աշխարհամասի կամ ըստ մասնագիտութեան:

Արեւմտեան փիլիսոփայութեան եւ բարոյագիտութեան պատմութեան համար, նկատի պիտի առնուին Եւրոպայի պատմութեան հետեւեալ 3 գլխաւոր ժամանակաշրջանները ու իրենց ենթաբաժանումները.-

- **Հին Դարաշրջան** (Հնադար – Antiquity, 700 մ.թ.ա. – 476 թ.)
 - Յունական Շրջան (Greek Era)
 - Հելլենիստական Շրջան (Hellenistic Era)
 - Հռոմէական Շրջան (Roman Era)
- **Միջին Դարաշրջան** (Միջնադար – Middle Ages, 476 – 1492 թ.)
 - Անցման Շրջան (Վերածնունդ – Renaissance, 1400 – 1600 թ.)
- **Նոր Դարաշրջան** (Նոր Դար – Modern Era)
 - Վաղ Նոր Դարաշրջան (1492 – 1789 թ.)
 - Միջին Նոր Դարաշրջան (1789 – 1917 թ.) կամ Անցման Շրջան (19-րդ Դար)
 - Ժամանակակից Շրջան (Contemporary Era – 20-րդ եւ 21-րդ Դար):



Բարոյագիտութեան պատմութիւնը, անբաժան մէկ մասն է արեւմտեան